ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանին 2018 թվականի դեկտեմբերի 3-7-ը Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղելու արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սուրեն Քրմոյան, Անահիտ Ավանեսյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ դեկտեմբերի 3-7-ը, Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա

Հրավիրող կողմը՝ Ավստրիայի սահմանադրական գործերի, բարեփոխումների, արդարադատության նախարարություն

Գործուղման նպատակը

Եվրոպայի միության կողմից ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում կայանալիք ճանաչողական այցին մասնակցության ապահովում՝ բանտային առողջապահության ոլորտի բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով:

Ճանաչողական այցը նպատակ է հետապնդել ծանոթանալ քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման առանձնահատկություններին, քաղաքացիական բժշկական հաստատություններում կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման

ընթացակարգին, այդ նպատակով քաղաքացիական հիվանդանոցներում առանձնացված հատուկ ստորաբաժանումներին, դրանց հագեցվածությանը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման տրամադրմանը, բուժման մեթոդներին:

Քննարկված թեմաները

Ճանաչողական այցի ընթացքում քննարկվել են կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ավստրիայում կայացած ճանաչողական այցը կարևորվում էր այն առումով, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների երաշխավորումը առաջնային և հրատապ լուծում պահանջող խնդիրներից է:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորումը բխում է նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի հանձնարարականների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման և քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման իրավունքին առնչվող ՀՀ-ի վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի խախտում արձանագրող վճիռների ամբողջական կատարման անհրաժեշտությունից: Ճանաչողական այցը հնարավորություն է ընձեռել առավել արդյունավետ իրականացնել

քրեակատարողական ոլորտի առողջապահական ծառայությունների արդիականացմանն ուղղված բարեփոխումները:

Ճանաչողական այցի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

1. քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման առանձնահատկությունները,
2. քաղաքացիական հիվանդանոցային հաստատություններում կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման ընթացակարգը,
3. քաղաքացիական բժշկական հաստատություններում կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման նպատակով առանձնացված հատուկ ստորաբաժանումները, դրանց հագեցվածությունը,
4. հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, բուժման մեթոդները:

Հայաստանի մասնակցության արդյունքները

Ճանաչողական այցին մասնակցությունը հնարավորություն է ընձեռելու արդյունավետորեն իրականացնել բանտային առողջապահության ոլորտի բարեփոխումները՝ ըստ այդմ ապահովելով բժշկական անձնակազմի մասնագիտական անկախությունը, հանրային առողջապահական համակարգին ինտեգրելու հնարավորության ստեղծումը, որակյալ բուժանձնակազմ ներգրավելու հնարավորության ստեղծումը, պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումը, ազատազրկված անձանց առողջապահական իրավունքների պաշտպանության համար ամուր հիմքեր ապահովումը: